

ոսկիրով շինուած գորգերով»⁽¹³⁾, հաւանաբար նման մեզի հասած այն գորգերուն՝ որոնց այժմ « Բոլոնէզ » (Լեհական) յորջորջումը կուտանք: Իսկ Թովմա Հերպերգ 1628 Մարտ 22ին Շիրազի Իմամ Ղուլի խանի պալատը այցելելուն կը նկատէ որ « գետինը սփռուած էին անօրինակ ճոխութեամբ ոսկիէ եւ մետաքսէ գորգեր»⁽¹⁴⁾: Ըստ ոմանց՝ հայ եւ ըստ Հերպերգի վրացի էր այս մեծահամբաւ խանը:

Այս տեսակ գորգեր գործելու արհեստը չի տարբերի միւսներէն, միայն թէ բնական է ոսկեթելով, արծաթթելով կամ մետաղէ թելով կարելի չէ խաւակապ ընել, ուստի ատոնք կը գործածուին պարզապէս առէջներուն եւ աստիւրուն խաչաձեւումով բանուածքի, զոր չծածկելու համար՝ բուրդէ խաւ չի գործածուիր: Այսպէս գորգը կը մնայ անխաւ գծազրութեամբ բոլոր այն տեղերը՝ ուր մետաղաթել գործածուած է:

Մետաղաթելը կը պատրաստուի երկու տեսակ: Նախ բարակ քաշուած կըլոր կամ տափակ թելը ուղղակի հիւսուածքին մէջ կը գործածուի: Երկրորդ բարակ քաշուած մետաղաթելը կը փաթթուի խիստ նուրբ մետաքս կամ բամպակ թելի շուրջ եւ յետոյ կը գործածուի իրր այր կամ առէջ: Մարգարիտ կամ ուրիշ գոհարներ կը գործածուին գծազրութեան մէջ հարկ եղած տեղերը՝ հիւսուածքին պատրաստութեան իսկ ընթացքին, մարգարիտը կամ գոհարը ծածկելով բանուածքին մէջ ազուցուելով, այսպէս գմայելի գորգեր պատրաստելով:

Մարգարիտները բնական է ոչ խոշոր կ'ըլլան եւ ոչ ալ ընտրելագոյն տեսակէն, այլ մանր եւ հունտ կոշուածներն են, որոնց մեր նախնիք « փուռ » կ'ըսէին, անտարակոյս նոյն « հունտ », « սերմ » նշանակութեամբ, եւ հաւանաբար պարսկերէն բառ:

ՄԵՏԱՔՍ

Արդէն խօսած եմ այս նիւթին մասին իմ ՀՈՒՄ ՄԵՏԱՔՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ գործիս մէջ, նախ հրատարակուած Պոսթոնի ՀԱՅՐԵՆԻՔ ամսադրին մէջ եւ յետոյ զատ հատորիկով: Հայերը ոչ միայն հնագոյն դարերէն սկսեալ աշխարհի զլխաւոր մետաքսավաճառներն էին, այլ նաեւ հում մետաքս կ'արտադրուէր Հայաստանի սահմաններուն մէջ շատ հինէն: Իսկ մետաքս գործածուած է հայկական ամէն տեսակ հիւսուածեղէններու եւ բանուածքներու մէջ:

Կային զուտ մետաքսեայ գորգեր մեր նախնեաց մօտ եւ նաեւ կը

(13) Անդ, էջ 511:

(14) Travels in Persia 1627-1629. — New York, 1929, p. 77.